ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. **N ----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԹԱՂԱՄԱՍ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետը և 17-րդ կետի 1-ին ենթակետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Տիչինայի փողոցի հ.320 հասցեի նոր կառուցվող թաղամասն անվանակոչել «Դեֆանս Հաուզինգ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԹԱՂԱՄԱՍ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի Տիչինայի փողոցի հ.320 հասցեում գտնվող 118հա մակերեսով հողամասում նախատեսվում է իրականացնել բազմաֆունկցիոնալ թաղամասի կառուցապատում, որը Փարիզի «Դեֆանս» թաղամասի նմանությամբ, իր մեջ կրում է նոր տիպի ժամանակակից քաղաքի գաղափարը:

Շինարարությունն իրականացվելու է երեք փուլով:

Առաջին փուլով նախատեսվում է կառուցել 63 բազմահարկ բնակելի շենք՝ ընդարձակ կանաչապատ բակերով: Թաղամասում կկառուցվեն և կգործեն մի քանի մանկապարտեզ և դպրոց:

Երկրորդ փուլով կկառուցվի բիզնես կենտրոն 15 բազմահարկ շենքերով: Բիզնես կենտրոնը կկառուցվի ֆրանսիացի ներդրողների մասնակցությամբ և կհիշեցնի «Դեֆանս» թաղամասի գործարար միջավայրը, որտեղ կտեղակայվեն տեղական և միջազգային ընկերությունների գրասենյակներ:

Երրորդ փուլով նախատեսվում է կառուցել ևս մեկ բնակելի թաղամաս՝ 30 բնակելի շենքերով, և ժամանակակից չափանիշներին համապատասխանող, նորագույն սարքավորումներով հագեցած հիվանդանոց: Փարիզի համալսարանական լավագույն հիվանդանոցներից մեկի հետ կա նախնական պայմանավորվածություն՝ հիվանդանոցը ֆրանսիական բժշկության չափանիշներով կառուցելու, կահավորելու, սարքավորումներով հագեցնելու, ինչպես նաև բուժանձնակազմի վերապատրաստման և մշտական համագործակցության վերաբերյալ:

Շինարարությանը զուգահեռ, Տիչինայի փողոցի հ.322 հասցեում գտնվող «Դեֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲ ընկերության անվամբ վարձակալության իրավունքով գրանցված 11 հա կից հողամասում հիմնվելու է փշատերև անտառ՝ Փարիզի Բուլոնյան անտառի նմանությամբ: Կառուցվելու են լճակներ, ջրային ավազաններ և շատրվաններ, որոնք կզբաղեցնեն շուրջ 5 հա հողատարածք:

Թաղամասի ամբողջ տարածքում երթևեկությունը կազմակերպվելու է հեծանիվներով և էլեկտրական սայլակներով:

Երևանի ծայրամասում ստեղծվելու է ֆրանսիական միջավայր՝ իր գործարար ակտիվությամբ, մշակութային հաստատությունների բազմազանությամբ, հանգստի և զբոսանքի համար նախատեսված անտառով, բազմաթիվ պուրակներով, ջրային ավազաններով և շատրվաններով:

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Տիչինայի փողոցի հ.320 հասցեի նոր կառուցվող թաղամասը «Դեֆանս Հաուզինգ» անվանակոչելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել «Դեֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲԸ-ի կողմից:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով հայ և ֆրանսիացի ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Ֆրանսիայի կառավարության հոգածությունը հայ ժողովրդի բազմահազար զավակների նկատմամբ, ինչպես նաև հայ ֆրանսիական բարեկամության դարավոր ավանդույթները՝ առաջարկվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Տիչինայի փողոցի հ.320 հասցեի նոր կառուցվող թաղամասն անվանակոչել «Դեֆանս Հաուզինգ»:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԹԱՂԱՄԱՍ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում թաղամաս անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԹԱՂԱՄԱՍ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում թաղամաս անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ